2021, № 2, 13-25 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2021.12.2.013

ԲԱՆԳԼԱԴԵՇԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱՐԵԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Հոդվածում ներկայացվում են Բանգլադեշում իրագործված ցեղասպանության նախադրյալները, երբ բնակչության մահմեդական մեծամասնությամբ բրիտանական Հնդկաստանի տարածքներում ստեղծվեց Պակիստան պետությունը, որը ձևավորվեց երկու թևերից՝ Արևմտյան Պակիստանից ու Արևելյան Պակիստանից: Պակիստանի կենտրոնական կառավարությունը տարբեր միջոցներ էր ձեռնարկում Արևելյան Պակիստանի բենգալախոս բնակչության ինքնությունը թուլացնելու և տնտեսությունը վերահսկողության տակ վերցնելու համար: Պակիստանի երկու թևերի միջև լարվածության առաջացման համար ճանապարհ հարթեցին 1970 թ. ընտրությունները, երբ Բանգլադեշում գործող Ավամի լիգան ջախջախիչ հաղթանակ տարավ և հնարավորություն ստացավ ձևավորելու կառավարություն և հռչակելու Բանգլադեշի անկախությունը:

Դրանով էր պայմանավորված, որ Պակիստանը 1971 թ. մարտի 25-ին ռազմական գործողություններ սկսեց Բանգլադեշում: Պակիստանը խնդիր էր դրել իրեն ենթարկել և գաղութացնել Բանգլադեշը, որին պետք է հասներ զանգվածային սպանությունների, բենգալական վերնախավի, մտավորականների և անկախության համար պայքարող մարտիկների ոչնչացման, զանգվածային բռնաբարությունների և ահաբեկման միջոցով: Բանգլադեշի անկախության համար պատերազմի 9 ամիսներին Պակիստանի զինվորականները և Ջամաաթ-ի-Իսլամի իսլամական գրոհայիններր սպանեցին մոտ 3 մլն մարդու և բռնաբարեցին մոտ 250 հազար բանգլադեշցի կանանց ու աղջիկների: Առնվազն 10 միլիոն մարդ գաղթեց Հնդկաստան, 30 մլն մարդ ստիպված եղավ հեռանալ իրենց տներից: Սակայն Պակիստանի ցեղասպանական արշավը չհասավ իր նպատակին, ավելին՝ հանգեցրեց Բանգլադեշի ինքնորոշմանը և ճանաչմանը որպես անկախ պետություն:

Բանալի բառեր – *Պակիստան, Բանգլադեշի ժողովրդի ցեղասպանություն, Հնդկաստան, Ավամի լիգա, «Լուսարձակ» գործողություն, զանգվածային սպանություններ, պատերազմական հանցագործներ*

Պակիստանի կողմից 1971 թ. Բանգլադեշի ժողովրդի ցեղասպանությունը երկար ժամանակ շատ քիչ ուշադրության էր արժանանում: Այն կարելի է դասել մոռացված ցեղասպանությունների շարքին, որոնք դուրս են մնացել հանրային քննարկումների, միջազգային լրատվական միջոցների ուշադրությունից, թեև այդ սարսափելի դեպքերի ժամանակ այն համաշխարհային հնչեղություն էր ստացել:

Համաշխարհային լրատվականներից շատերը մանրամասն տեղեկություններ էին հաղորդում այդ իրադարձությունների մասին: Օրինակ՝ Հնդկաստանի ռադիոները, «Ամերիկայի ձայնը», BBC-ն լուսաբանում էին Բանգլադեշում ընթացող պատերազմի գրեթե ամեն օրը: Բանգլադեշում ցեղասպանության սկիզբն ընդունված է համարել 1971 թ. մարտի 25-ը՝ «Լուսարձակ» անունը ստացած գործողությունների մեկնարկով, երբ Պակիստանը սկսեց քայլեր ձեռնարկել՝ ճնշելու Արևելյան Պակիստանում Բանգլադեշի ինքնորոշման իրավունքը: Այդ պատճառով մարտի 25-ը նշվում է որպես բանգլադեշցիների ցեղասպանության հիշատակի օր:

Բանգլադեշի անկախության համար պատերազմի 9 ամիսներին Պակիստանի զինվորականների և Ջամաաթ-ի-Իսլամի կրոնական գրոհայինների զոհը դարձավ մոտ 3 մլն մարդ, ինչպես նաև բռնության ենթարկվեցին մոտ 250 հազար բանգլադեշցի կանայք և աղջիկներ: Առնվազն 10 միլիոն մարդ գաղթեց Հնդկաստան, 30 մլն մարդ ստիպված եղավ հեռանալ իրենց տներից[1]:

Բանգլադեշի ժողովրդի ցեղասպանության նախադրյալները

1947 թ. օգոստոսին Մեծ Բրիտանիայից Հնդկաստանի անկախացմամբ ձևավորվեցին երկու պետություններ՝ Հնդկաստանը և Պակիստանը: Վերջինս ստեղծվեց մահմեդական խիտ բնակչությամբ բրիտանական Հնդկաստանի տարածքներում՝ Արևմտյան ու Արևելյան Պակիստաններից, որոնք միմյանցից բաժանված էին Հնդկաստանի տարածքով: Այդ երկու տարածաշրջանները ոչ միայն աշխարհագրորեն էին անջրպետված, այլ նաև մշակութային առումով:

Արևմտյան Պակիստանի կազմի մեջ մտնում էր 55 մլն բնակչություն, որի գերակշիռ մասը խոսում էր ուրդու լեզվով: Բենգալախոս Արևելյան Պակիստանը, որն զբաղեցնում էր Պակիստանի մեկ երրորդը, կազմում էր երկրի բնակչության մեծամասնությունը՝ 75 մլն: Այստեղ նույնպես մահմեդականներ էին, սակայն կար նաև բենգալական հինդուիստ փոքրամասնություն: Բանգլադեշի մահմեդականները քամահրական վերաբերմունքի էին արժանանում. նրանց համարում էին որպես երկրորդ կարգի քաղաքացիներ[2]:

Բենգալական անկախության համար պայքարի հիմնական շարժառիթը լեզվի և ազգային ինքնության խնդիրն էր: 1948 թ. Պակիստանի ղեկավարությունը հայտարարեց ուրդուն միակ պետական լեզու ընդունելու իր մտադրության մասին, մինչդեռ այդ լեզվով խոսում էր բնակչության ընդամենը 7 տոկոսը: Բենգալացի ուսանողները բողոքե-

---

[1] Տե՛ս **Charny I.**, Encyclopedia of Genocide, Santa Barbara, California: ABC-CLIO, vol. 1, 1999, էջ 115:

[2] Տե՛ս **Adam J.**, Genocide: A Comprehensive Introduction, London and New York, Routledge, 2010, էջ 227:

ցին այդ որոշման դեմ և շարժում սկսեցին, որը շարունակվեց 8 տարի՝ մինչև 1956 թ., երբ Պակիստանի նոր ընդունված սահմանադրությամբ բենգալերենը և ուրդուն ճանաչվեցին պետական լեզուներ: Բանգլադեշը խնդիր ուներ պաշտպանելու ոչ միայն իր լեզուն, այլև մշակույթը, որը նույնպես հարվածի տակ էր[3]:

Պակիստանի կենտրոնական կառավարությունը տարբեր միջոցներ էր ձեռնարկում Արևելյան Պակիստանի տնտեսությունը վերահսկողության տակ վերցնելու համար: Արևմտյան Պակիստանի խտրականությունն Արևելյան Պակիստանի նկատմամբ տեսանելի էր նաև մեկ շնչին ընկնող եկամտի չափից, որն Արևմտյան Պակիստանում 32 տոկոսով ավելի էր 1959-1960 թթ. և 61 տոկոսով ավելի՝ 1969-1970 թթ.[4]: Թեև երկրի արտարժույթի մեծ մասը երկիր էր հոսում Արևելյան Պակիստանում աճեցված ջուտի[5] վաճառքից, սակայն Արևելյան Պակիստանը զարգացման ծրագրերի համար ստանում էր գումարի ընդամենը 35 տոկոսը: Բենգալացիները կարծում էին, որ իրենք Արևմտյան Պակիստանի տնտեսական գաղութի են վերածվել[6]: 1950-ական և 1960-ական թթ. բենգալացի տնտեսագետների մի խումբ, վկայակոչելով տնտեսական անհավասարությունը, հանդես է գալիս երկու տնտեսությունից բաղկացած համակարգ ստեղծելու առաջարկով[7]:

Պակիստանի երկու թևերի միջև տնտեսական անհավասարության պատճառով Արևելյան Պակիստանում հիմնվեց «վեց կետերի» շարժումը, որը ղեկավարում էր Ավամի լիգայի[8] առաջնորդ Շեյխ Մուջիբուր Ռահմանը: Նա ավելի մեծ ինքնավարություն էր պահանջում Արևելյան Պակիստանի համար: Շարժման հիմնական նպատակն էր իրականացնել 1966 թ. բենգալական ազգայնական կուսակցությունների կոալիցիայի ներկայացրած վեց պահանջները՝ Արևմտյան Պակիստանի ղեկավարության կողմից Արևելյան Պակիստանի շահագործմանը վերջ դնելու մասին[9]:

Այդ 6 պահանջներն էին՝

---

[3] Տե՛ս **Jahan R.**, Genocide in Bangladesh, in *Century of Genocide: Eywitness Accounts and Critical Views*, ed. Totten S., Parsons W.S., Charny I.W., New York and London, Garland Publishing, 1997, էջ 292:

[4] Տե՛ս European Foundation for South Asian Studies, 1971 Liberation War, birth of Bangladesh and comparison with present day Pakistan, Amsterdam, 2017, https://www.efsas.org/Bangladesh%20Research%20Dossier-%20Final.pdf:

[5] Ջուտը լորենիների ընտանիքին պատկանող բուսատեսակ է, որից ստացվում են նույն անունը կրող մանրաթելերը: Մանածագործական հումքի համաշխարհային արտադրանքի մեջ ջուտը բամբակենուց հետո երկրորդ տեղն է գրավում:

[6] Տե՛ս **Beachler D.**, The politics of genocide scholarship: the case of Bangladesh, Patterns of Prejudice, Vol. 41, № 5, 2007, էջ 472:

[7] Տե՛ս **Rounaq J.**, նշվ. աշխ., էջ 292:

[8] Ավամի լիգան (այլ կերպ՝ Բանգլադեշի ժողովրդական լիգա) Բանգլադեշի ձախակենտրոն քաղաքական կուսակցություններից է, որը հիմնադրվել է 1949 թ. Արևելյան Պակիստանում:

[9] Ավելի մանրամասն տե՛ս **Manik W.**, The historic six-point movement and its impact on the struggle for independence, https://www.thedailystar.net/news-detail-40021

1. Սահմանադրությունը Լահորի բանաձևի[10] հովանու ներքո պետք է ապահովի Պակիստանի Դաշնության գոյությունը և կառավարման խորհրդարանական ձևը՝ օրենսդիր մարմնի գերակայությամբ, որն ընտրվում է ուղիղ քվեարկությամբ՝ մեծահասակներին տրված համընդհանուր արտոնության հիման վրա։

2. Դաշնային կառավարությանը պետք է վերապահվի միայն երկու խնդիրների իրականացում՝ պաշտպանություն և արտաքին քաղաքականություն, իսկ մնացած հարցերը պետք է վերապահվեն դաշնային պետություններին։

3. Պակիստանի երկու թևերի համար պետք է ներդրվի երկու առանձին, բայց ազատորեն փոխարկելի արժույթ, իսկ եթե դա իրագործելի չէ, երկիրը պետք է ունենա մեկ արժույթ, բայց պետք է սահմանվեն արդյունավետ դրույթներ, որպեսզի կանխվի կապիտալի արտահոսքը Արևելքից դեպի Արևմտյան Պակիստան։ Ավելին՝ Արևելյան Պակիստանի համար պետք է ստեղծվի բանկային առանձին պահուստ և իրականացվի հարկաբյուջետային և դրամավարկային առանձին քաղաքականություն։

4. Հարկերի և եկամուտների հավաքագրումը պետք է վերապահված լինի դաշնային միավորներին։ Դաշնային կառավարությունը պետք է ունենա իր մասնաբաժինը հարկային երկամուտներում՝ իր ծախսերը ապահովելու համար։

5. Պակիստանի երկու թևերը պետք է ունենան արտարժույթի շահույթի երկու առանձին հաշիվներ։ Դաշնային կառավարության պահանջները պետք է բավարարեն երկու թևերին հավասարապես կամ այն հարաբերակցությամբ, որը պետք է ամրագրվի։ Տեղական արտադրանքը պետք է ազատ տեղաշարժվելու հնարավորություն ստանա երկու թևերի միջև, իսկ սահմանադրությունը նշված միավորներին հնարավորություն կտա արտասահմանյան երկրների հետ առևտրային կապեր հաստատելու։

6. Արևելյան Պակիստանը պետք է ունենա առանձին ոստիկանություն և զինված ուժեր[11]։

Արևմտյան Պակիստանի ղեկավարները մերժեցին Մուջիբուրի առաջ քաշած 6 կետերը՝ այն որակելով անջատողական։ Մինչ Ավամի լիգան կենտրոնացնում էր իր էներգիան 6 կետերի ծրագրի շրջանակում հասարակության աջակցությունը համախմբելու շուրջ, կառավարությունը շարժումը թուլացնելու նպատակով սկսեց բանտարկել Ավամի

---

[10] Լահորի բանաձևն ընդունվել է համահնդկաստանյան մահմեդական լիգայի կողմից Լահորում 1940 թ. մարտի 22-ից մարտի 24-ը տեղի ունեցած նստաշրջանի ժամանակ և վերաբերում է հինդուիստների ու մահմեդականների սահմանազատմանը, ինչպես նաև Բրիտանական Հնդկաստանում մահմեդականների համար առանձին պետության ստեղծմանը։ Հինդուիստ լիդերներն այն համարում էին Պակիստան պետության ստեղծմանը միտված քայլ։

[11] Տե՛ս **Datta A.**, Refugees and Borders in South Asia: The Great Exodus of 1971, London and New York: Routledge Taylor & Francis, 2013, էջ 5։

լիգայի առաջնորդներին, քանի որ 1966-1969 թթ. Ավամի լիգան արդեն դարձել էր Արևմտյան Պակիստանի ճնշման դեմ բենգալական ազգայնականության պայքարի խորհրդանիշը[12]:

1965 թ. հնդկա-պակիստանյան պատերազմը[13] ևս հանգեցրեց դժգոհությունների հետագա խորացմանը և Արևելյան Պակիստանում անջատողական շարժման ուժգնացմանը: Սա բենգալացիների համար մտահոգության առիթ էր: Նրանք տեսնում էին, որ անպաշտպան են հնդիկների հարձակումներից[14], և Պակիստանի կառավարիչ Այուբ Խանը պատրաստ էր կորցնել Արևելքը Քաշմիր նահանգը ձեռք բերելու դիմաց[15]:

Պակիստանի երկու թևերի միջև լարվածության առաջացման համար ճանապարհ հարթեցին 1970 թ. ընտրությունները, երբ Ավամի լիգան ջախջախիչ հաղթանակ տարավ՝ Արևելյան Պակիստանի պառլամենտում ստանալով 169 տեղերից 167-ը[16]: Սա հնարավորություն էր տալիս Ավամի լիգային ձևավորելու կառավարություն և Բանգլադեշը հռչակել անկախ:

Պակիստանի ղեկավարությունը նախագահ Յահյա Խանի գլխավորությամբ սա դիտարկեց սպառնալիք իրենց իշխանության և շահերի համար: Հենց դա էլ Արևելյան Պակիստանում ցեղասպանություն իրագործելու շարժառիթ դարձավ: Յահյա Խանը, աջակցություն ստանալով պակիստանցի հայտնի գործիչ Զուլկիֆար Ալի Բհուտոյի կողմից, արգելեց Ավամի լիգայի գործունեությունը և հայտարարեց ռազմական դրություն մտցնելու մասին:

Պակիստանյան բանակի փենջաբցի գեներալները և զինվորները Արևելյան Պակիստանում բենգալացիներին համարում էին ցածրակարգ ժողովուրդ, որն աչքի էր ընկում իսլամի նկատմամբ ոչ լիաժեք հավատքով և հավատարիմ չէր Պակիստանին: Նրանք համոզված էին, որ ռազմական ճնշումները վերջ կդնեն բենգալացիների համառությանը: Այսպես օրինակ՝ 1971 թ. փետրվարի 22-ին գեներալ Յահյա Խանն ասում էր. «Սպանի՛ր նրանցից երեք միլիոնին, իսկ մնացածը կսկսեն սնվել մեր ձեռքից»[17]:

---

[12] Տե՛ս **Molla G.**, The Awami League: From Charismatic Leadership to Political Party, in *Political Parties in South Asia*, eds. Mitra S.K., Enskat M., Spiess C., Westport, Connecticut and London, Preager Publishers, 2004, էջ 220:

[13] 1965 թ. Հնդկա-պակիստանյան պատերազմի մասին ավելի մասնրամասն տե՛ս **Bajwa F.**, From Kutch to Tashkent: The Indo-Pakistan War of 1965, London, Hurst Publishers, 2013, 256 էջ:

[14] Տե՛ս **Midlarsky M. I.**, Origins of Political Extremism: Mass Violence in the Twentieth Century and Beyond, New York, Cambridge University Press, 2011, էջ 257:

[15] 1947 թ.-ից սկսած՝ Հնդկաստանը և Պակիստանը հավակնություններ ունեն Հինդուստան թերակղզու հյուսիսում գտնվող մահմեդական մեծամասնությամբ Քաշմիրի նահանգի նկատմամբ:

[16] Տե՛ս **Adam J.**, նշվ. աշխ., էջ 228:

[17] **Mansur S.**, The Bangladesh Genocide and the Nixon–Kissinger 'Tilt' (1971), in *Dirty Hands and Vicious Deeds: The US Government's Complicity in Crimes against Humanity and Genocide*, ed. Totten S., Toronto, University of Toronto Press, p. 90.

Ցեղասպանության իրագործման փուլերը

1971 թ. մարտի 25-ին սկսվեցին ռազմական գործողությունները: Հարձակման թիրախ ընտրվեցին Բանգլադեշի մի շարք վայրեր և անձինք: Փորձ արվեց գլխատել Արևելյան Պակիստանի քաղաքական և մտավորական առաջնորդներին, ազգայնական քարոզչության կենտրոն Դաքայի համալսարանը ենթարկվեց հարձակման: «Լուսարձակ» գործողության ընթացքում սպանվեցին հարյուրավոր ուսանողներ[18]: Այս քայլը Պակիստանն արդարացնում էր բիհարցիների[19] նկատմամբ բենգալացիների բռնություններով: Նախատեսում էր մարտի 26-ին վերահսկողություն հաստատել մեծ քաղաքների վրա և մեկամսյա ժամկետում ոչնչացնել քաղաքական և զինվորական բոլոր ընդդիմադիրներին: Պակիստանի գործողությունները պլանավորողները Բանգլադեշի կողմից երկարատև դիմադրություն չէին ակնկալում:

Երբ Դաքայի կոտորածների լուրը տարածվեց, և 1971 թ. մարտի 26-ին հայտարարվեց Բանգլադեշի անկախության մասին, Ավամի լիգան Շեյխ Մուջիբուր Ռահմանի ղեկավարությամբ երկրի բոլոր քաղաքներում կազմակերպեց զինված դիմադրություն: Մայիսի կեսերին Պակիստանի բանակը հաջողություն էր արձանագրում՝ քաղաքներն իր հսկողության տակ վերցնելով: Բանակի գործողությունների հետևանքով եղավ քաղաքացիական բնակչության զանգվածային սպանություններ, տեղահանություններ[20]: Բանգլադեշի իրադարձությունների մասին առաջին հաղորդումը Արևմտյան Պակիստանի լրագրող Էնթոնի Մասկարենհասի կողմից 1971 թ. հունիսի 13-ին տպագրվել է Լոնդոնի «The Sunday Times»-ում՝ «Ցեղասպանություն» վերնագրով[21]:

Բանգլադեշի ազատագրական պատերազմի երկրորդ փուլը (մայիսի կեսերից մինչև սեպտեմբեր) երկար պլանավորված էր բենգալական ազգայնականների և Պակիստանի կառավարության կողմից: Բենգալացի ազգայնականները հիմնեցին վտարանդի կառավարություն և նախաձեռնեցին արտաքին հրապարակային քարոզարշավներ՝ իրենց գործի առաջխաղացման համար աջակցություն գտնելու նպատակով: Նրանք նաև հավաքագրեցին գրեթե 100.000 երիտասարդ կամավորականների, որոնք մասնակցեցին ռազմական վարժանքների և Բանգլադեշի ներսում պարտիզանական գործողություններ իրականացրին[22]:

---

[18] Տե՛ս **Adam J.**, նշվ. աշխ., էջ 228:

[19] Բիհարցի մահմեդականները փոքրամասնություն էին Բանգլադեշում, Պակիստանին կողմնակից դիրքորոշում ունեին, աջակցում էին պակիստանյան բանակին, այդ իսկ պատճառով ճնշումների էին ենթարկվում բանգլադեշցիների կողմից:

[20] Տե՛ս **Jahan R.**, The Bangladesh Genocide, in *Teaching about Genocide: Issues, Approaches, and Resource*, ed. Samuel Totten, Greenwich, IAP, 2004, էջ 147:

[21] Տե՛ս **Tahmima A.**, "Pakistan's State of Denial". The New York Times, 2013/12/26, https://www.nytimes.com/2013/12/27/opinion/anam-pakistans-overdue-apology.html:

[22] Տե՛ս **Jahan R.**, Genocide in Bangladesh, էջ 297:

Ազատագրական պատերազմի երկրորդ փուլում պակիստանյան բանակը, ռազմական գործողություններին զուգահեռ, զբաղվել է նաև խոշոր չափերի թալանով և աղջիկների ու կանանց նկատմամբ բռնություններով: Եթե ազատագրական պայքարի առաջին փուլում բազմաթիվ երիտասարդ տղամարդիկ զոհ դարձան, ապա պատերազմի երկրորդ փուլում կանայք և աղջիկները դարձան Պակիստանի բանակի հատուկ թիրախ: Կանանց և աղջիկներին բռնաբարում էին իրենց ընտանիքի անդամների աչքի առջև՝ նրանց պատժելու և ահաբեկելու համար: Ու նրանց նաև առևանգում էին և բազմիցս բռնաբարում հատուկ ճամբարներում[23]: Պատերազմի ընթացքում պակիստանյան բանակը բռնաբարել է 200 հազարից մինչև 400 հազար բանգլադեշցի կանանց և աղջիկների[24]:

Պատերազմի ժամանակ պակիստանյան բանակը և տեղական համագործակցողները՝ հիմնականում Ջամաաթ-ի-Իսլամի խմբավորում[25], իրագործել են բենգալյան մտավորականների համատարած մահապատիժ: Դաքայի համալսարանի մի շարք դասախոսներ սպանվեցին պատերազմի առաջին իսկ օրերին[26]: Թիրախավորված սպանությունների ամենասարսափելի դեպքերը տեղի ունեցան պատերազմի վերջին օրերին:

Բանգլադեշի ազատագրական պայքարի երրորդ փուլի (հոկտեմբերի կեսից մինչև դեկտեմբերի կեսը) ընթացքում ուժեղացան պարտիզանական գործողություններ, և ազատագրական պայքարն իր հանգուցալուծմանը հասավ մի կողմից Պակիստանի, իսկ մյուս կողմից Հնդկաստանի և Բանգլադեշի միջև կարճատև պատերազմով[27]: 1971 թ. նոյեմբերին Հնդկաստանը զորքեր ուղարկեց՝ հինդուիստներին և բենգալացիներին Արևմտյան Պակիստանի կողմից իրագործվող ցեղասպանությունից պաշտպանելու համար:

Հնդկաստանը, նպատակ ունենալով իր ռազմական միջամտությամբ նպաստել Բանգլադեշ պետության ստեղծմանը, ոչ միայն իր հիմնական հակառակորդ Պակիստանի թուլացման խնդիրն էր լուծում, այլև միլիոնավոր փախստականների մուտքը իր տարածք կանխելու նպատակ ուներ: Դեկտեմբերի 3-ին լայնածավալ պատերազմ սկսվեց Հնդկաստանի և Արևմտյան Պակիստանի միջև, որն ավարտվեց 1971 թ. դեկտեմբերի 16-ին պակիստանյան բանակի պարտությամբ[28]: Պակիս-

---

[23] Տե՛ս **Jahan R.**, The Bangladesh Genocide, էջ 147:

[24] Տե՛ս **Kramarae C.**, **Spender D.** (ed.), Routledge International Encyclopedia of Women: Global Women's Issues and Knowledge, New York and London, Routledge, 2004, էջ 913:

[25] Ջամաաթ-ի-Իսլամին (Jamaat-e-Islami Pakistan) իսլամական քաղաքական կուսակցություն է, որը կտրականապես դեմ էր Բանգլադեշի անկախությանը և Պակիստանի տրոհմանը: 1971 թ. այն համագործակցեց Պակիստանի բանակի հետ բենգալական ազգայնականների և ազատագրական մտավորականների դեմ գործողություններում:

[26] Foreign Relations of the United States, 1969–1976, Volume E–7, Documents on South Asia, 1969–1972 – Office of the Historian, https://history.state.gov/historicaldocuments/frus1969-76ve07/d126. Ajoy Roy, "Homage to my martyr colleagues," 2002, https://mm-gold.azureedge.net/Articles/ajoy/martyr_intellectual.html.

[27] Տե՛ս **Jahan R.**, The Bangladesh Genocide, էջ 148:

[28] Տե՛ս **Cooper A. D.**, The Geography of Genocide, Lanham, University Press of America, 2009, էջ 168:

տանր շարունակում էր իր ցեղասպանական գործողությունները նույնիսկ այն ժամանակ, երբ իր պարտությունն անխուսափելի էր:

Մտավորականների և ազգային փոքրամասնությունների ոչնչացումը

Պակիստանցիները որոշեցին սպանել յուրաքանչյուր քաղաքի հայտնի մտավորականներին և արհեստավարժ մասնագետներին՝ բանգլադեշցիներին գիտական և մասնագիտական ներուժից զրկելու համար: Այդ սպանդն իրագործվեց հատկապես դեկտեմբերի 12-ից դեկտեմբերի 14-ը[29]: Դեկտեմբերի 14-ն այսօր Բանգլադեշում նշվում է որպես նահատակված մտավորականների օր: Պատերազմի 9 ամիսների ընթացքում տեղական համախոհների օգնությամբ պակիստանյան բանակը մահապատժի է ենթարկել 991 ուսուցչի, 13 լրագրողի, 49 ֆիզիկոսի, 42 իրավաբանի և 16 գրողի, մեծ թվով արվեստագետների և ինժեներների[30]:

Ընդհանուր առմամբ մտավորականության ոչնչացումը բնորոշ է բոլոր ցեղասպանություններին, և դեռևս 1945 թ. իրավաբան Ռաֆայել Լեմկինը, որը «Genocide» (ցեղասպանություն) եզրույթի հեղինակն է, իր «Ցեղասպանությունը՝ ժամանակակից հանցագործություն» հոդվածում անդրադարձել է նաև Եվրոպայում նացիստների կողմից մտավորականության ոչնչացմանը՝ որպես սոցիալական ոլորտում ցեղասպանության իրագործման տեխնիկայի մաս: «Ազգի սոցիալական կառուցվածքը կենսական նշանակություն ունի ազգային զարգացման համար, հետևաբար գերմանացի զավթիչները ձգտում են իրականացնել այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են թուլացնել ազգային, հոգևոր ռեսուրսները: Եվ այդ հարձակման առանցքային կետը մտավորականությունն է եղել, քանի որ այս խումբն է հիմնականում ապահովում ազգի ղեկավարումը: Լեհաստանում և Սլովենիայում մտավորականների ու հոգևորականների մեծ մասը սպանվում կամ աքսորվում էր Գերմանիա՝ հարկադիր աշխատանքի»[31],- նշում է Լեմկինը:

Բանգլադեշում ցեղասպանության ժամանակ մտավորականության այսպիսի զանգվածային սպանությունը համեմատելի է Հայոց ցեղասպանության ժամանակ հայ մտավորականության ոչնչացմանը, երբ 1915 թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում և հետագա ամիսներին կայսրության այլ տարածքներում ձերբակալվեցին հարյուրավոր հայ մտավորականներ, որոնց աքսորեցին Սիրիայի անապատային շրջաններ, ինչին հետևեց նաև գավառներում հարյուրավոր հայ մտավորականների ու ազգային ընտրանու ոչնչացումը: Եվ պատահական չէ, որ Հայոց ցեղասպանության ոգեկոչման օր է ընդունված ապրիլի 24-ը:

---

[29] Տե՛ս **Jahan R.**, The Bangladesh Genocide, էջ 148:

[30] Տե՛ս **Khan M. H.**, "Killing of Intellectuals". In Islam, Sirajul; Jamal, Ahmed A. Banglapedia: National Encyclopedia of Bangladesh (Second ed.). Asiatic Society of Bangladesh, 2012, http://en.banglapedia.org/index.php?title=Killing_of_Intellectuals:

[31] **Lemkin R.**, "Genocide - A Modern Crime", Free World, 1945, vol. 4, p. 39-43, http://www.preventgenocide.org/lemkin/freeworld1945.htm:

Հարկ է նշել, որ պատերազմի ընթացքում պակիստանյան բանակի համար հատուկ թիրախ էին նաև հինդուիստ փոքրամասնության ներկայացուցիչները: Բանգլադեշում ցեղասպանության ժամանակ տեղի են ունեցել հինդուիստ տղամարդկանց զանգվածային սպանություններ և կանանց նկատմամբ բռնություններ: Պակիստանյան զինվորները գյուղից գյուղ հալածում էին հինդուիստներին: Միայն 1971 թ. հունիսին ավելի քան 4 մլն հինդուիստ փախստականներ տեղափոխվեցին Հնդկաստան[32]: Բուդդայական տաճարները և վանականները նույնպես հարձակումների ենթարկվեցին[33]:

Բանգլադեշի ժողովրդի ցեղասպանության միջազգային չափումը

Պատերազմի հենց սկզբից էլ Բանգլադեշը ստացավ Հնդկաստանի աջակցությունը: Հնդկաստանի դաշնակից ԽՍՀՄ-ը և սոցիալիստական ճամբարի երկրները նույնպես սատարում էին Բանգլադեշին: Իսլամական երկրները, ինչպես նաև Չինաստանը, ընդհանուր առմամբ Պակիստանի կողմն էին: ԱՄՆ պաշտոնական քաղաքականությունը նույնպես Պակիստանի օգտին էր[34]: ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնը Պակիստանը դիտում էր սառը պատերազմյան դաշնակից և հրաժարվում էր նրա գործողությունները դատապարտելուց: ԱՄՆ կառավարությունը զինամթերք էր տրամադրում Պակիստանին՝ չնայած կոնգրեսի առարկություններին[35]: Ամերիկացի որոշ քաղաքական գործիչներ, սակայն բացասաբար էին արտահայտվում Բանգլադեշում կատարվող իրադարձությունների մասին, իսկ սենատոր Էդվարդ Քենեդին Պակիստանին մեղադրում էր ցեղասպանություն իրագործելու մեջ և կոչ անում դադարեցնել ամերիկյան ռազմական ու տնտեսական օգնության տրամադրումը Պակիստանին[36]:

Պատերազմից հետո հնդկական բանակի ձեռքում էին 92.000 պակիստանցի ռազմագերիներ, որոնցից 195-ը մեղադրվում էին պատերազմական հանցագործությունների մեջ: 1974 թ. ապրիլին նրանք բոլորն էլ ազատ արձակվեցին Բանգլադեշի, Պակիստանի և Հնդկաստանի միջև Դելիի եռակողմ համաձայնագրի կնքումից հետո, և Բանգլադեշը թույլ տվեց նրանց վերադառնալ Պակիստան՝ վերջինիս կողմից իր անկախությունը ճանաչելու դիմաց[37]: 1974 թ. փետրվարի 22-ին Պակիստանը

---

[32] Տե՛ս **Cooper A. D.**, նշվ. աշխ., էջ 168:

[33] Տե՛ս "Bangladesh: A Bengali Abbasi Lurking Somewhere?," South Asia Analysis Group, 23 April, 2001, Archived from the original on 13 June 2010, https://web.archive.org/web/20100613152129/http://southasiaanalysis.org/papers3/paper232.html.

[34] Տե՛ս **Jahan R.**, The Bangladesh Genocide, էջ 149:

[35] Տե՛ս **Travis H.**, Genocide, Ethnonationalism, and the United Nations: Exploring the Causes of Mass Killing Since 1945, New York and London, Routledge, 2013, էջ 109:

[36] Տե՛ս "Kennedy Charges Genocide in Pakistan, Urges Aid Cutoff," The Washington Post, 17 Augustm, 1971, http://www.docstrangelove.com/uploads/1971/foreign/19710817_wp_kennedy_charges_genocide_in_Pakistan.pdf.

[37] Տե՛ս **Linton S.**, 'Completing the circle: accountability for the crimes of the 1971 Bangladesh war of liberation', Criminal Law Forum (2010) 21:191–311, էջ 203:

ճանաչեց Բանգլադեշի անկախությունը: Ցեղասպանության հիմնական պատասխանատուները այդպես էլ մնացին անպատիժ:

2008 թ. ընդհանուր ընտրությունների ժամանակ Ավամի լիգան խոստացավ դատական պատասխանատվության ենթարկել պատերազմական հանցագործներին: Բանգլադեշի կառավարությունն այդ նպատակով տրիբունալ ստեղծեց այն բանից հետո, երբ Ավամի լիգան 2008 թ. հաղթեց ընդհանուր ընտրություններում՝ խորհրդարանում գբաղեցնելով տեղերի ավելի քան երկու երրորդը: 2009 թ. հիմնված՝ Բանգլադեշի միջազգային հանցագործությունների տրիբունալի խնդիրն էր հետաքննել և դատական հետապնդում իրականացնել 1971 թ. պակիստանյան բանակի զինծառայողների և նրանց հետ տեղական համագործակցողների նկատմամբ:

Պատերազմի հանցագործությունների փաստահավաք հանձնաժողովը, որին հանձնարարված էր ուսումնասիրել և գտնել ապացույցներ, ավարտեց իր գեկույցը 2008 թ.՝ բացահայտելով 1600 կասկածյալների[38]: Առաջին մեղադրանքները ներկայացվեցին 2010 թ.:

Տրիբունալը գրեթե բացառապես կենտրոնացած էր այն ենթադրյալ հանցագործների վրա, որոնք ընդդիմադիր քաղաքական գործիչներ էին: 2012 թ. Ջամաթ-ի-իսլամիի՝ ամենամեծ իսլամական կուսակցության 9 և Բանգլադեշի ազգային կուսակցության 2 առաջնորդների մեղադրանք ներկայացվեց[39]: Առաջինը Ջամաաթի երեք առաջնորդներն էին: Նրանք դատապարտվեցին պատերազմական հանցագործությունների իրագործման մի քանի մեղադրանքներով:

Համուդուր Ռահմանի հանձնաժողովը[40], որը ստեղծվել էր Պակիստանի կառավարության կողմից պատերազմից հետո, նշեց, որ Պակիստանի զինված ուժերը բազմաթիվ վայրագություններ են կատարել[41]: Նախկին Արևմտյան Պակիստանի բանակի մի քանի սպաներ, որոնք ծառայում էին Բանգլադեշում 1971 թ., նույնպես խոստովանել են իրենց ուժերի իրագործած լայնածավալ վայրագությունների մասին[42]: Սա-

---

[38] Տե՛ս **Syedur R.**, Historical dictionary of Bangladesh (4th ed.), Lanham, Toronto and Plymouth, Rowman & Littlefield, 2010, էջ 289:

[39] Տե՛ս **Anderson K.**, Collective Crimes, Collective Memory, and Transitional Justice in Bangladesh, in *Understanding the Age of Transitional Justice: Crimes, Courts, Commissions, and Chronicling*, ed. by Adler N., New Brunswick, Rutgers University Press, 2018, էջ 228:

[40] 1971 թ. դեկտեմբերի 26-ին «Պատերազմի հարցերով հանձնաժողով» անվանումով հայտնի Համուդուր Ռահմանի հանձնաժողովի ստեղծման նպատակն էր գնահատել Պակիստանի ռազմաքաղաքական ներգրավվածությունը Արևելյան Պակիստանում 1947-1971 թթ:

[41] Տե՛ս "The Supplement Report of the Hamoodur Rahman Commission," Dunya News archives, retrieved 22 August 2016, http://img.dunyanews.tv/images/docss/hamoodur_rahman_commission_report.pdf: Տե՛ս նաև "The Hamood-ur-Rahman Commission Report," retrieved 15 January 2016, http://storyofpakistan.com/the-hamood-ur-rahman-commission-report.

[42] Տե՛ս "Genocide they wrote," The Daily Star, 2 December, 2015, https://www.thedailystar.net/frontpage/genocide-they-wrote-180955. **Inam A.** and **Shakhawat L.**, "The blueprint for massacre," The Daily Star, 6 December 2015, https://www.thedailystar.net/frontpage/the-blueprint-massacre-183016. **Inam A**. and **Shakhawat L.**, "Partners in the genocide," The Daily Star, 7 December, 2015, https://www.thedailystar.net/frontpage/partners-the-genocide-183616.

կայն Պակիստանի կառավարությունը շարունակում է ժխտել, որ Պակիստանի կառավարման ներքո գտնվող Բանգլադեշում (Արևելյան Պակիստանում) 1971 թ. Բանգլադեշի ազատագրական պատերազմի ժամանակ տեղի է ունեցել ցեղասպանություն: Ավելին, նրանք սովորաբար մեղադրում են ցեղասպանության մասին հաղորդող պակիստանցի լրագրողներին (օրինակ՝ Էնթոնի Մասկարենհասին[43])՝ նրանց անվանելով «հակառակորդի գործակալներ»[44]:

Գիտնականների շրջանում գոյություն ունի համաձայնություն առ այն, որ Բանգլադեշի ազատագրական պատերազմի ժամանակ ցեղասպանություն է տեղի ունեցել՝ բացառությամբ որոշ մասնագետների, որոնք ժխտում են ցեղասպանություն բնորոշումը: Ցեղասպանության ընթացքում զոհերի ընդհանուր թվաքանակի վերաբերյալ ևս տարակարծություններ կան: Պակիստանը պնդում է, որ զոհերի թիվն ընդամենը 26 հազար է, իսկ Հնդկաստանը և Բանգլադեշը ներկայացնում են 3 մլն:

Պատահական չէ, որ Բանգլադեշը միջազգային հարթակներում բարձրացնում է 1971 թվականին տեղի ունեցած ցեղասպանության թեման: Եվ հատկանշական է, որ Բանգլադեշի վարչապետ Շեյխ Հասինան, որը Ավամի լիգայի առաջնորդ Շեյխ Մուջիբուր Ռահմանի աղջիկն է, ՄԱԿ-ի ամբիոնից պարբերաբար բարձրաձայնում է Բանգլադեշում տեղի ունեցած ցեղասպանության մասին: Իսկ պակիստանյան կողմը հերքում է նրա մեղադրանքները[45]:

2014 թ. մայիսին Բանգլադեշի Կհուլնա քաղաքում, որը մեծությամբ երրորդն է, հիմնվեց ցեղասպանության թանգարան՝ «1971 թ. ցեղասպանության ու խոշտանգման արխիվ և թանգարան» (1971: Genocide and torture Archive and Museum)[46]: Քաղաքի ընտրությունը պատահական չէր, քանի որ Կհուլնայում սարսափելի ցեղասպանական գործողություններ էին կատարվել:

Ամփոփելով նշենք, որ Պակիստանի ցեղասպանական արշավը չհասավ իր նպատակին, ավելին՝ հանգեցրեց Բանգլադեշի ինքնորոշմանը և ճանաչմանը որպես անկախ պետություն: Եթե, օրինակ, Հայոց ցեղասպանության դեպքում Օսմանյան կայսրության ղեկավարությունը նպատակ ուներ բնաջնջել և ոչնչացնել կայսրության ողջ հայ բնակչութ-

---

[43] Էնթոնի Մասկարենհասը հնդկական ծագմամբ բրիտանացի լրագրող էր, պակիստանյան «Karachi Morning News» թերթի և լոնդոնյան «Sunday Times»-ի թղթակից: Հայտնի է Արևելյան Պակիստանի անկախության պատերազմի ընթացքում պակիստանցի զինված ուժերի կողմից ոճրագործությունների մասին հրապարակումներով:

[44] **Dummett M.**, “Bangladesh war: The article that changed history,” BBC News, December 16, 2011, https://www.bbc.com/news/world-asia-16207201. **Anam T.**, “Pakistan's State of Denial,” The New York Times, December 26, 2013, https://www.nytimes.com /2013/12/27/opinion/anam-pakistans-overdue-apology.html.

[45] Տե՛ս Pakistani military started "genocide" of 1971: Bangladeshi Prime Minister Sheikh Hasina, September 22, 2017, https://economictimes.indiatimes.com/news/international/world-news/pakistani-military-started-genocide-of-1971-bangladeshi-prime-minister-sheikh-hasina/articleshow/60792659.cms.

[46] Բանգլադեշի ցեղասպանության թանգարանի կայքը տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.genocidemuseumbd.org/en/

յանը՝ իրենց պանթուրքիստական նպատակներն իրագործելու, հայերի հայրենիքին և ունեցվածքին տիրանալու համար, ապա Պակիստանի դեպքում նպատակադրումն այլ էր: Պակիստանը խնդիր էր դրել իրեն ենթարկել և գաղութացնել Բանգլադեշը, որին պետք է հասներ զանգվածային սպանությունների, Բանգլադեշի վերնախավի, մտավորականների և անկախության համար պայքարող մարտիկների ոչնչացման, զանգվածային բռնաբարությունների և ահաբեկման միջոցով:

НАРЕК ПОГОСЯН – ***Геноцид народа Бангладеш.*** – В статье обрисована ситуация, в которой сложились предпосылки для геноцида в Бангладеш. Пакистан был образован на территориях Британской Индии с мусульманским большинством. Они состояли из двух частей – Западной и Восточной. Центральное правительство Пакистана предприняло различные меры, чтобы ослабить самобытность бенгальскоговорящего населения Восточного Пакистана и взять под контроль его экономику. Выборы 1970 г. усилили напряженность между двумя частями страны. В Бангладеш убедительную победу одержала Авами Лига. Она провозгласила независимость и сформировала правительство Бангладеш.

25 марта 1971 г. Пакистан начал военные действия в Бангладеш. За девять месяцев войны за независимость Бангладеш пакистанские военные и боевики «Джамаат-и-Ислами» убили около 3 миллионов человек и изнасиловали около 250000 бангладешских женщин и девочек. Не менее 10 миллионов человек бежали в Индию, 30 миллионов были вынуждены покинуть свои дома. Однако геноцид не достиг своей цели, более того, привёл к самоопределению и признанию Бангладеш в качестве независимого государства.

Ключевые слова: *Пакистан, Геноцид народа Бангладеш, Индия, Авами лиг, операция «Прожектор», массовые убийства, военные преступники*

NAREK POGHOSYAN – ***The Genocide of the People of Bangladesh.*** – The article presents the preconditions for the genocide in Bangladesh, when the state of Pakistan was established in British Muslim-majority British India, which was formed from two parts: West Pakistan and East Pakistan. The central government of Pakistan was taking various measures to weaken the identity of the Bengali-speaking population of East Pakistan and to take control of the economy. The way was paved for tensions between the two wings of Pakistan in 1970. The Bangladeshi Awami League won a landslide victory, got a chance to form a government and declared the independence of Bangladesh.

It was due to that that Pakistan in 1971 On March 25, he launched military operations in Bangladesh. Pakistan set itself the task of subjugating and colonizing Bangladesh, which it had to achieve through violence, mass killings, the killing of the Bengali elite, intellectuals, the fighters for independence, mass rapes and intimidation. During the nine months of the war for Bangladesh's independence, the Pakistani military and Jamaat-e-Islami militants killed about 3 million people and raped about 250.000 Bangladeshi women and girls. At least 10 million people emigrated to India, 30 million people were forced to leave their homes. However, the genocide campaign carried out by Pakistan did not achieve its goal, moreover, it led to the self-determination and recognition of Bangladesh as an independent state.

Key words: *Pakistan, Genocide of the people of Bangladesh, India, Awami League, operation “Searchlight”, mass murders, war criminals*